

LIPANAN
Journal Arménien
POLITIQUE - LITTÉRAIRE

RÉDACTION - ADMINISTRATION
Place des Canons, 9, Rue d'Italie
BEYROUTH «Liban»
DIRECTEUR-PROPRIÉTAIRE
J. ADJEMIAN

ԼԻՓԱՆԱՆ

Ազգային - Քաղաքական - Գրական
ԱՆԿԱՆ ՀԱՅՏԱԹԵՐԹ

(ليبانان) جريدة ارمنية سياسية ادبية اقتصادية حرّة

ԾԱՌԱՌ
18
ՀՈԿՏԵՄԲԵՐ
1930

Բ Ա Ժ Ն Ե Գ Ի Ն

ՍՈՒՐԻԱ	ՏՐԿԻԱ	ՎԻՅՆԱ	ԵՐԵՎԱՆ
350	175	125	
ԱՐՏԱՍՈՂՄԱՆ	6	4	2 ՏՈՒՄ

ՄԵՐ ԽՈՍՏՔԸ

ԻՆՉ ԿԸ ՆՇԱՆԱԿԷ . . .

Պէջութի «ԼՐՈՒՄ» ֆրանս. թերթը դարձեալ կը գրէ. — «... Եւ այս մաքրագործումը չի պիտի կրնայ ըստ, եթէ ոչ հայերը գիւղերու մէջ հաստատուելով. եթէ ոչ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՁԷՂՈՒԴԱՑԵԱԼ ԳՕԼՍՆԻԻ ՄԸ ՍՏԵՂԾՈՒՄՈՒՄ»:

Իսկ այդ գոյնիդպումն տե՛ղը: «ԼՐՈՒՄ» շատ կանոնաւոր առաջարկած էր արդէն. — «ՀԱՅՏԵՐԹԻՆ ՏԱԼ ՎԵՐԻՆ ԶԷՂՈՒՄԷՆ ԵՒ ՀՈՒ ՀԱՍՏԱՏԵԼ ՁԱՆՈՒՄ»:

Առաջին անգամը չէ այս. և ո՛չ ալ «ԼՐՈՒՄ» միակը՝ որ իր գրութիւնները կ'եզրափակէ նման առաջարկութեամբ մը: Եւստ կանոնաւոր շատ մը օտար թերթեր, նման մտքեր յայտնած էին, և ուրիշներ—ազգայնականները—հակառակած անոնց. իսկ մենք՝ անհատական կարծիքէ մը աւելի արժէք տուած չ'ըլլալով այդ բոլորին, երբէք ալ չէինք ուզած ըզբաղուիլ անոնցմով: Եւ ոսկայն այս անգամ, «ԼՐՈՒՄ»-ի վերջին գրութիւններուն վրայէն կարելի չէ անուշադիր անցնիլ, քանի որ անոնց մէջ խոր դիտում և արհեստական ճիգ մը կայ մօտոր ճամբաներով մըլտ ՆՈՒՄ, ՄԻՆԻՆՈՒՄ, ԿԵՄԻՆ ԳԱՐՈՒ:

Ի՞նչ կը նշանակէ այս, ի՞նչպէս բացատրել զայն. . .
Անշուշտ մեզմէ առաջ խօսք կ'իյնար նման ծրագրի մը յղութիւնն ու ծնունդը իրեն վերագրուող հայ կուսակցութեան. բայց չէ՛նք գիտեր թէ այդ կուսակցութիւնն ալ իր տարիներու քարտուղիները ի՞նչ ըսել կ'ուզէ. . .
Ձեր բաւեր որ հայազամանք չ'ունեցող երբեմն զաշնակցական թերթեր — «ՈՒՇ ՍՈՒՏ Է, ՍԻՍԻ Է»-ներով հող քաշին խնդրոյն վրայ՝ երբ ան սկսած էր եփիլ ու եփիլ:

Մանր ամբաստանութիւններ կային. կ'ըսէին թէ Դաշնակցութիւնը Հիւսիսային Սուրիոյ մէջ Հայկական Օճախ կը ծրագրէ, Գոնիստանէն և Պաշտանիւնէն նոր գաղթականներ Սուրիա փոխադրելու փորձը կ'ընէ, Սուրիա-Կարապաշէնը հայատակութիւնէ խզել, անջատել, չէզոքացնել կ'ուզէ. երկրի տեղական շահերուն դէմ քաղաքական քայլեր կ'առնէ, և ինչ, ամբաստանութիւններ՝ որոնք այսօր ուղղակիօրէն կը ճնշեն ընդհանուր հայաթեան վրին, ու կ'սպառնան անոր կեանքին: Ուրեմն, եթէ զաշնակցութիւնը հայութեան ներկան կանուխէ կը խորհէր, եթէ անոր կեանքին ու բախտին վրայ գոյն ինչ կը դողա, պէտք էր որ առաջին օրէն պաշտօնապէս հերքէր իրեն դէմ եղած ամէն ամբաստանութիւն, և ըսէր իր բացօթյա խօսքը՝ եթէ տարբեր բան էր ան:

Իսկ այժմ, երբ այդ ուղղութեամբ համոզումները քորացած են օտարին մէջ, երբ կազմածը բոյն գրած է նոյնիսկ միտքնոց մէջ, ալ ի՞նչ նշանակութիւն ունի երգում—պատառ ուրացումը, լեզուպատառ միտումը, և նոյնիսկ ՈՒՇՍՈՒՄ ամէն պաշտօնական հերքում՝ երբ այդ բոլորը նշանակաւոր մը անգամ չ'են կրնար փոխել ներկայ տիրու իրականութիւնէն, ու թերեւ հրահրեն բարեբան կիրքերը, և մեզ ձգեն արահետէն ալ վար:

Ուրեմն ի՞նչ կը փնտռեն ի՞նչ է ի՞նչ ոչ հրաժարել ամէն ձեռք արկածախնդրութիւններէ, և տալ գործնական կեանքի գրական հերքում:

Եթէ զաշնակցութիւնը իր մէջ կը պահէ հայութեան յիշատակը, եթէ իր մէջ ունի ազգութեան ոգի, օտարադարձ կը չ'ափսոսէ իր քայլերը, չ'ափ ու կշիռ կը գնէ իր լեզուին ու գրչին, և ինչ որ կարեւորագոյնն է, կը տեսնէ իր լեզուին իսկական հասակը, ու ըստ այնմ կը դասաւորէ իր ցանկութիւնները: Այլապէս, անտանիկ՝ կը դառնայ ան հայուն թէ օտարին հաւատարմապէս՝ ու կը դաւաճանէ իր ցեղին պաշտօնապէս:

Զարկը, ազգը այդ դժբախտ ցեղի գլխին, սին պոռոտաբանութիւնները ստեղծած են ընդմիջում ու ներկայ ապառնացող վտանգը ուրիշ բան չէ, բայց եթէ զաշնակցութեան իր, գիտիլը ապրիցնելու համար ստեղծած պոռոտաբանութիւններուն տխուր արկիւնքը:

Տեղական մամուլը տեղի կամ անտեղի, պէտք եղածէն աւելի խօսեցաւ մեր մասին: Չկայ տարբեր կէք, այլ միջոց, բայց եթէ կուսակցականօրէն, թէ ազգովին, տալ գործնական կեանքի փաստացի հերքումը եթէ կ'ուզենք որ պապանջին չար լեզուները:

Դամասկոսի եւ Լաթաքիոյ Կար. Բոնիմորդները Անդիլիաս կ'այցելեն

Ներկայ եօթնեակի ընթացքին Դամասկոսի և Լաթաքիոյ Կար. Բոնիմորդներ Գեր. Տ. Տ. Խաթ Եպիս. Անուպանեան և Եփրեմ Եպիս. Տոն-մուրի ժամանած են Պէյրութ, մասնաւոր կերպով ու անձամբ շնորհակտութեան համար Ն. Ս. Օժոթիւն վեհապետ Կաթողիկոսը իր հայրապետական Նորահաստատ Աթոռի և կաթմակերպութեան համար:

Կիրակի օր, Փետրի 11. Խաթ Եպիսկոպոս մէջ պատարագած ու աւուր պատշաճի քարոզ մը խօսած է Տ. Խաթ Սրբապետ: Ուրախալի է որ ազգային դոյութեան պահպանման համար փրկարար զեր կատարող հայ եկեղեցին, թեմական ու կաթողիկոսական կաթմակերպութեան շնորհիւ, կ'ստանայ նոր թափ ու շնորհիւ անոր նուիրուած հեղինակաւոր զեմքերու, կը խոստանայ նպատակաւոր արդիւնք:

Ժամանակաւորացի ներքին կարգադրութիւնները գրեթէ վերջացած են, կը փնտռուի հայրապետանոցի ներքին կարգադրութեանը որ ի մօտայ կը լրանայ:

“ՀԱՍՏԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ”

«La Syrie» պաշտօնաթերթը իր 11 Հոկտեմբեր թիւի առաջին էջին «Արդիականութիւններ» բաժնի մէջ հրատարակած է այս վերտառութեամբ հատուած մը, զոր իր շահեկանութեան համար, իր կարեւոր մասերով, կը ներկայացնենք մեր ընթերցողներուն:

— Լիբանանի և Սուրիոյ մէջ գոյութիւն ունեցող վաթսուհ համայնավարներու շուրջ կատարուող քննադատութիւնները կը շարունակուին խիստ կերպով: Այս մասին մեր օգտակար դատած կերպով արտաստաւորուած էինք արդէն: Աւելի կարեւոր ճշգրտութիւն համար կ'ուզենք աւելցնել հետեւեալ թղթակցութիւնը զոր մեզի ուղղ ալ է մեր Պէյրութի ընթերցողներէն մէկ:

«Մենք շահագրգռութեամբ հետեւած եմ մեր հոգատարեալ երկիրներու մէջ համայնավարութեան մասին մղած պայքարին:

Ունեւած որոշ փորձառութեամբ, որովհետեւ շատ մօտէն չ'ըլլաւ եմ համայնավարներու և անոնց ձեռքէն խուսափած նախախնամական պարագայներու օգուտէն: Իսկ ինչպէս չ'ենք ձեռք ու շահագրգռութիւնը հիմարելու: Հայ Հընդակառն կուսակցութեան շարքերուն մէջ մէկ մամ երկու օտարականներու ներկայութեան վրայ, որոնք Պէյրութի և Հալէպի քիլիկի մեծաւորներն են:

Մի մոռնալ թէ մօտաւորապէս տարի մը առաջ, մարտիկան զաշնակցութեանը քաղկացած ուսանարն գաղութը կասկածի տակ առած էր մէկ կամ երկու անձնաւորութիւններ: Այս ինչպիսի համար կարգ մը թերթերու մէջ տեղաւոր պայքար մը:

Ուրեմն ամէն կասկած վեր է թէ Պէյրութի կամ իր անմիջական շրջանին մէջ գոյութիւն ունի մէկ կամ երկու գաղտնի գործակալները «Կէքէք»-ի որոնք կը գործեն Մոսկովայի հրահանգներուն համաձայն և համայնավար գործակալի արեւելեան թրքականութիւնը գործակալութեանց միջեւ միտքիւն գլխի պաշտօնը կը կատարեն:

Այս տեղեկութիւնները լաւ ուսումնասիրեցէք և եթէ յարմար կը տեսնէք, հրատարակեցէք:

Պէյրութի ընթերցողի զիմակին տակ սքողուած վատարիւն ազգայինի մը կողմէ գրուած այս համարեան շրջանի չարաչառ լրտեսներու գործունէութիւնը յիշեցնող ժողովուրդ, համաձայն ցոյց տրուած փափաքի, հրատարակել վերջ, «La Syrie» կ'աւելցնէ. — Ասիկա կը հաստատէ ինչ որ մենք յաճախ կ'ըսէինք: Ամէն կասկած վեր է որ եթէ որոշ թիւերով հայեր գիւնուորադրուած են Փ. Միջագետքի հայկական շարքերուն մէջ, գլխաւոր բոքսականութիւնները կուզան գործունէ. . .

Ազգապաշտան, որու մասին երէկ կը խօսէինք, կարեւոր մի անձնաւորութիւն է անոնց համար միայն ուրոնք կը պահուուին իր ետեւը եւ կը քաշեն իր չուանիքը:

Սակայն վերջապէս, հայ կամ օտար, վտանգը գոյութիւն ունի եւ չ'ապամի քաղաքականութիւնը աւելի վտանգաւոր է քան չափազանց:

ԹԻՔ. ԼՈՒՐԵՐ

ՄԵՐՊԵՍԹԻ ԿԵՐՈՒՄ

Քարտուղարը

ՅԱՐՁԱԿՄԱՆ

ԵՆԹԱՐԿՈՒԵՑԱԿ

Մերպէսթ կուսակցութեան Պոլսոյ կեդրոնի քարտուղարներէն Իպրահիմ պէյ առջին գիշեր յարձակման ենթարկուած և վիրաւորուած է: Յիշեալը երբ իրեկունս տուն կերթար, Թաքսիմի հրապարակին նոր բացուած ճամբաներէն մէկուն վրայ ի քաղաքի մը կը հանգիւյր, ուրկէ հօթել հոգի դուրս կելլեն կը սկսին իր վրայ վազել: Քարտուղարը իսկոյն այն կողմի ոտականական տաղաւորը կը վազէ, բայց այդ պահուն պահակ ոտական չէր գտնուէր: Միջոց այդ, յարձակողները կը հասնին եւ մէկը Իպրահիմ պէյի փողկապին կառնելով կը սկսի կողորդը սեղմել, ուրիշ մըն ալ գաւազանի գորակոր հարուած կուտայ զեմքին, քիչ քիչ վերէն մասը վիրաւորելով: Յարձակողները կուտին հարուածներ ալ կուտան Իպրահիմ պէյի, որուն աղաղակներուն վրայ յետոյ կ'սկսին Բաշկալիի ուղղութեամբ փախչիլ: Յարձակման ենթարկուողը, սակայն, ետեւէն կը վազէ եւ Պէյրութի կողմը կը յաջողի երկուքը բռնել առաջ գիշերապահին ու պարտիզայաններուն, մէկն ալ ինք կը բռնէ եւ ոտականութեան կը յանձնէ:

Բռնուածներէն մէկը Էֆթալ հիւանդանոցին տաօք քարտուղարն է որ էմին կը կոչուի, միւսը ասոր գրագիրն է Միտուհ եւ երրորդն ալ Շիշլիի օտարիներէն էմին անուն մէկն է: Յարձակումը պատրաստուած էին երկու ինքնաշարժներով: Միւս չորս անձերը փախած են:

ՅԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՄԸ ԻԶՄԻՐԻ

ՄԸ «ՈՎ ԹՈՒՐԷ, ԳՈՐԾԻՔ

ՄԸ ԸԼԼԱՐ ՅՈՒՆԱԿԱՆ

ԵՒ ՀԱՅԿ. ԽԱՆԵՐՈՒՆ»

Իզմիր. — Գիշերը բոլոր տունները բաժնուած են յայտարարութիւններ, որոնք Վերսալի մտաւորականներ» ստորագրութիւնը կը կրեն: Յայտարարութեան պարունակութիւնը սա է:

«Մերպէսթ կուսակցութիւնը գործի գլուխ կը բերէ Յոյները եւ Հայերը: Յարգելի հայրենակիցներ, լըսեցիք, Մերպէսթ կուսակցութիւնը 6 յունի եւ 4 հայ ներկայացուցած է իր թեկնածու Պոլսոյ թաղապետական ընտրութեանց մէջ: Ի՞նչպէս լուր կուտան կուսակցութեան մը, որ կուզէ գործի գլուխ բերիլ մարգիկ որոնք գեւե տասը տարի առաջ ամէն գէշութիւն ըրին, քեզ տունիդ (Շար. Կարգալ Բ. ԼՂ)

Գոյթեան քաղաքականութիւնը:

Ինչպէս երէկ կ'ըսէինք շատ կարեւորութիւն ունի այն կը քաշուինք եթէ իշխանութիւնները զգուշացուցած են ընդհ. Ապահովութեան ըս. պատարկութիւնները, անոնց վտանգաւորութիւնը պիտի չ'ենթադրենք:

ԿՍՄԻԹՆԵՐ

ՓԱՍՏԱԿԱՆ ՈՒՂՏՆ ՈՒ ԷՇԸ

Էշը, որ հին դարերու, ու ներկայ դարու մէջ ալ, ուղտերու կարգանքին յառաջնորդն է, հայտնի էր տէրը շարունակ իր ցածուկ կոնակին վրայ կրիէ, կը պատմուի թէ օր մը ձանձրացած, ուղտին հետ միասին փախուստ կուտայ, ազատ ապրելու փափաքով:

Ուղտապանը, ուղտին կորուստէն աւելի ցաւելով իր չորքտանի ինքնաշարժի անհետացման համար, կ'սկսի հետապնդումի:

Փախուսական ընկերները կ'անցնին ամառի դաշտերէ, ազատօրէն ու առատօրէն ըմբռնելով կանանչ խոտերն ու զաւար տերեւները:

Եւ սակայն էշը, գարիի ընկճող պէտքէն մղուած, կը փորձուի խանգարել լեռներու ամառայնութեան իր արկագնան զօրնջով:

Ուղտը ի զուր կը ջանայ համոզել զայն որպէսզի լուռ մնայ:

Բայց երկայնական ժամանակ, չկարենալով դիմանալ իր փոքր կուրծքը նեղող ձայնի հակադրութեանը, կ'արձակէ իր զօրնջը:

Ու տէրը շուտով կը հասնի եւ կ'առաջնորդէ զանոնք զէպի ախոռ:

Անհայտարար էշը կրկին կը յաջողի փոխառաջնորդ փախուստի ինկերով հետ: Կ'անցնին օրիւ. էշը, խրատուած առաջին փորձէն, որու դառն տպաւորութիւնը դիւ կ'զգար իր գլխուն ու կողերուն վրայ, կը պահէ լուռութիւն:

Եւ սակայն շարաշար յոգնած ըլլալով, կը խնդրէ ուղտէն որպէսզի քիչ մը շալկէ դիւքը:

Ուղտը կը կատարէ իր ընկերով փափաքը ոչ թէ անոր սիրոյն ալ ձեռքաւորութեան երկրորդ համար, բայց մի քանի օրուան ապառ կեանքէն ոգեւորուած, ուսանելու անդիմադրելի փափաք մը կ'ունենայ:

Էշը կը պաղատի որպէսզի իր անգաղութիւնը չ'խուսկէ, սակայն ուղտը չկարենալով հաղաւթել իր ինքնաշարժը ըզմանքի, կը կատարէ արանգակ ոտուած և իր ընկերը, երկրաշարժի զօրաւոր ցնցումի մը շափ տակ, թաւալազոր կ'իյնայ գետին:

Սաստիկ վախցած ու վնասուած ըլլալով, էշը կը հարկադրուի մի քանի օր անշարժ սպասել մինչեւ որ կրկին ձեռք կուտայ իր և ընկերով օժիքները:

Այս պատմուածքը չիլիլէ՞ր մարդ մեր ընտանեկան և մասնաւոր կերպով հասարակական շրջանակներու մէջ յաճախապէս հակասութիւններուն: Իտեւ մէկուն անյայտագրմը, մէկ սխալ քայլը կը քննադատուի ուրիշի մը կողմէ և փոխադարձաբար:

Մէկը միւսէն անջատողը, մէկը միւսին դէմ լարողը անձնականը կատարում և գաղափարի հակահոսանքի ոյժն է:

Պատեհ առիթը ներկայանալուն պէս կ'ուզենք զգետնել զիմար, ինչպէս րբին էշն ու ուղտը:

Եւ սակայն անձնական կամ խոժ բախան անհասկացողութիւնն կը տուած ազգը:

Ու այսպէս պիտի առնէ որ քան սոյն պատմուածքի իշուն ու ուղտին անհասկացող ողին պակսի մեր մօտ:

ՕՏԵՂԸ ՈՐԴԻ

մէջ թուանորոշու համար, և ա-
մէն ատեն յարձակում գործեցին
պատուիդ վրայ:

Այս Սէրպիսի կուսակցութեան
ներկայացուցած յոյն եւ հայ թեկնա-
ծուները.— նախկին երեսփոխաններ
Օրֆանտիս եւ Փանճիրի, Արամի
նախկին պէն փանտաղիտիս, Արիս-
տի օղու Նիքօլաքի, գործարանա-
տէր Եմի Վոլոս, արտաքին նախա-
րարութեան նախկին պաշտօնատե-
րէն Հրանդ եւ Գալանճեան, Պերճ
Բէրէսթեան, Հալապի օղու Եռ-
սուֆ:

Ով թուրք ազգ, ուշադրութիւն
ըրէ, նորէն գործիք մը ըլլար յունա-
կան եւ կայսրական խաղերուն:

ԹՈՒՐԻԱ ՊԱՐՏԱՒՈՐ Է ՎԱՐԵԼ ԿԵՍԷ ՀԱՆՐ. ՊԱՐՏԲԵՐՈՒ

ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ

Սերպիսի երեսփոխան Մահմաւա-
պէն կը գրէ «Միլլիէթ»-ի մէջ.—

Հանալիյն պարտքերու փարիզի
Վարչական խորհուրդը տարօրինակ
զեկոյց մը հրատարակած է: Զեկոյցը
կըսէ թէ Թուրքիա պարտաւոր է
գործադրել 1928ի համաձայնագրի
և թէ Պ. Խրաթի տեղեկագրին հա-
մաձայն Թուրքիա իրիճակի է այդ
վճարումը ընելու:

Կը հետեւի թէ Վարչական խոր-
հուրդը իրեն նպատակաւ մասերը
միայն առած է իրիճակ տեղեկագրին,
իսկ անտեսած այն մասերը որոնք
ի նպատակ Թուրքիոյ են:

Արդարեւ, իրիճակ տեղեկագրին
մէջ չկայ ոեւէ հատուած ուր ըսուած
ըլլայ թէ մեր կայսրութիւնը փոխուած
է ի նպատակ բաժնետէրներուն եւ թէ
պատճառ չկայ փոխելու գոյալիճա-
կը: Նոյն իսկ կարելի է ըսել որ կան
նշաններ, որոնք կը ցուցնեն թէ մեր
կայսրութիւնը զէպի գէշը փոխուած է:

Օտմ. Պարտքերու խնդրին մէջ
բաժնետէրներուն ըրածին պէս, մի-
այն ելմտագլխի աշգոյժ դիտելի չէ
խնդիր, այլ նկատի առնելու է նա-
եւ պիւտանգի պարագան, վճարելու
հնարաւորութիւնը: Այս օր տաղ-
նապ կայ երկրին մէջ եւ մինքն ըս-
տիպում ենք թէ թեկնածիւ տուրքե-
րը, Արդ. ինչով գոցենք առաջ գա-
լիք բացը:

Կը ըսենք թէ բաժնետէրներու
պատուիրակները նորէն էնիկելի պի-
տի գան եւ պիտի բանակցին: Ժիշդ
է թէ հաւանական չէ որ բաժնետէր-
ները իրենց ներկայ հիմքով կարե-
նան գործին մէջէն ելլել: Միայն,
ինչպէս ունի նաեւ վճարելու անկա-
րելութեան կողմ մը, զոր պարտա-
ւոր են նկատի առնել:

ՓՈՒՐԱՄԱՍՆՈՒԹԵԱՆ

ԽՆԴԻՐԸ

«Լա Թրիբուն»-ի խմբագրա-
կանին թէ առայժմ անկարելի է գոր-
ծակցել փոքրամասնութեանց հետ,
զիտեղ կուտայ:—

«Փոթթիք»-ը կը յիշէ ազգային
մտահոգութեան ծագած փաստեր,
որոնց մէջք ալ համակարծիք ենք:
Պոթթիք գրուման չըմանին տեղի ու-
նեցած ցաւալի զէպերը բոլորիս ալ
յիշողութեան մէջ են: Բայց, յաղ-
թանակէն յետոյ, անբաժանի եւ
լինասակար տարբեր հետացան երկը-
րէն: Անոնք չէին կրնար բնակիլ եւ
պէտք չէ բնակէին հաս: Իսկ հոս
միացողները առողջ տարբեր են, կա-
պուած հայրենիքին, եւ մէկ փափա-
ք ունին. թուրքիոյ Մեծութիւնը:

Կառավարութեան կրնայ խա-
տուռ քաղաքականութեամբ ձուլել
գիտակց, զգացումով թրքացնել բո-
լոր փոքրամասնութիւնները: Մեր
ա թին իսլամներ, քրիստոնեաներ եւ
հրիստիոն չկան, այլ միայն Թուրքի
Բարձրագոյն անարդար, իսկ գործա-
պէս անզուարէնութիւն պիտի ըլ-
կայ կարգ մը անձներու գաւաճանու-
թեան համար պատասխանատու ըն-
կատել հաւաքականութիւնները: Ին-
չոր Թերթիստիք Տափառ Թերթիստի
չեն, բայց Զերքիստիք չէրէպ չէ Լու-
հիստիք չեն: Այսպէս օլ բոլոր հա-
յերը Անդրանիկի չեն, ոչ ալ բո-
լոր յոյները Պոթթիք:

Սերպիսի կուսակցութիւնը կու-
գէ ցործակցել փոքրամասնութեան

ներուն հետ, որովհետեւ այդ գոր-
ծակցութիւնը մաս կը կազմէ իր ծը-
րագրին: Մինչդեռ իսլամի ըմբռնու-
թաբեր է: Ապագան միայն պիտի
հաստատէ թէ այս երկու ըմբռնու-
թեան ուրիշ աւելի կը համապատաս-
խանէ Թուրքիոյ պահանջներուն:
Իսկ «Փոթթիք»-ը աւելի անկեղծ պի-
տի ըլլար, եթէ ըսէ: Թէ իսլամի ծը-
րագրերը թուրքաւոր չէ փոքրամասնու-
թեանց հետ գործակցելու: Ապա թէ
ոչ իր յիշած խնդիրները պարզ պա-
տեղաւորեն են:

Մենք անհրաժեշտ կը նկատենք
փոքրամասնութիւններու հետ գոր-
ծակցութիւնը: Մենք պիտի աշխա-
տինք իսլամներու եւ ոչ իսլամներու
միջեւ զգացումներու վերջնական
ձուլում առաջ բերելու օրինակ պի-
տի հանդիսանանք, փոքրամասնու-
թիւնները առնելով մեր մէջ, մեր
եանրային գործերուն մէջ:

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԱՎԱՐՁԱԻ

ՎԵՐՈՒՂՈՐԶԱԻ

ՈՒՆԷ ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹԻՒՆ

ԶԿԱՅ ԹՈՒՐԻՔՈՅ ԵՒ ՐՈՒՍՈՅ

ՄԻՋԵՒ

Արտաքին գործադար Թէֆթիք
Րիւշտիւ պէն երէկ առաւօտ Ռուսի-
ային Պոլսի վերադարձաւ եւ զիմա-
ւորուեցաւ պետական անձնուրու եւ
երեսփոխաններու կողմէ: Գործադա-
րը Թուրքիան իրենաւեցաւ եւ ի
մէջ այլոց ընդունեց այցելութիւնը
Սերպիսի, Սյուր ալ պիտի ընդունի
իւրաքի անդլիտական Գոմիսէրը եւ ի-
րիկուան շոգեկառքով էնիկելի պիտի
մեկնի:

Թէֆթիք Րիւշտիւ պէն երէկ ը-
րագործներու ըսաւ թէ Ռուսիոյ մէջ
իր ունեցած տեսակցութիւնները
արտակարգ բան մը չէին: Յետոյ ա-
ւելցուց.

— «Ռքքան բացառութեմ քիչ է այն
չեւր ընդունելութիւնը զոր գտայ
Ռուսիոյ մէջ: Թէ կառավարութիւնը
թէ կուսակցութիւնը եւ թէ ժողո-
վուրդը չափազանց անկեղծ եւ սի-
րալիք ընդունելութիւն մը ըրին ին-
ժի: Շատ անկեղծ տեսակցութիւններ
ունեցայ Պ.Պ. Լիթվինովի եւ Գարա-
խանի հետ: Թուրքեւեռուս յարաբե-
րութիւնները իսկաւ բարեկամական
են, մեր յիշեալ ու եւ է տարակա-
ծութիւն չկայ:»

ՈՒՐ ՏԱՆՅԱՆ ԸՆԴԴԻՄԱԳԻՐՆԵՐԸ

ԱՏԱՆԱ.— Թաղապետական ըն-
տրութիւններուն մէջ Սէրպիսի կու-
սակցութիւնը մէկ քուէի առաւելու-
թեամբ յաղթական է: Նոր կուսակ-
ցութեան կողմնակիցները ցնծութեան
մէջ են:

ԳՈՒՆԱ.— Սէրպիսի կուսակցու-
թիւնը որ ճշող մեծամասնութիւն
մը ունի, որոշած է Գոմիսիք ընտը-
րութիւններուն չմանակցել: Կու-
սակցութեան քուէատուքը հակադրութեան
տակ առած է: Այս որոշումը մեծ
յուզում առաջ բերած է:

ԳՈՒՆԱ.— Թաղապետական
ընտրութիւնները աւարտեցան: Սէր-
պիսի կուսակցութիւնը ջախջախիչ
մեծամասնութեամբ մը ընտրութիւ-
նը շահեցաւ:

ՊԱՆՏՐԱ.— Թաղապետական
ընտրութիւններուն մէջ Սէրպիսի
կուսակցութիւնը շահեցաւ: Ընտը-
րութիւնը շատ ոգեւոր եղաւ: Պա-
նտեւսիքի երեսփոխան Մէլիքզա-
տէ Մէհմետ պէն, իսլամի պարտութեան
դաշնացած, Սէրպիսիք քարոզչին-
քէն Պէքրէ Էֆենտիս իսլամի կեդրո-
նը հրաւիրուած եւ այնտեղ, սենեակ
մը տանելով, ապառկած է զայն:

ՎԱՅԻ ՓԱՇԱ ԱՐԱՐԱՏ ԿԵՐՈՒՅ
Վաչի Մ. Բէմալ փաշա այսօրեւ-
րս որոշած է այցելել Արարատի հա-
կաւր: Կը կարծեն թէ Վաչիի այ-
ցելութեան նպատակն է հանգա-
րանել Գրտական մտայնութիւնը ու
սիրաւանել Գիւրճիսի:

Այս ուղեւորութեան պատճառ
կը նկատուին քրտական նոր խլրտու-
մը, որոնց մասին բացարձակ
լուծութիւն կը պահեն թրքական թեր-
թերը:

Թէ Լեւոնտիք զգաղական ոչ

Վ Տ Ա Ն Գ Ը

Սուրիայի կեանքը, նոր ու վը-
տանգաւոր փոփոխ մը մէջ կը մտնէ:
Հակառակ հայուն մեկուսացած. ին-
քն իր մէջ ապրելու աւանդական
ձգտումին, տեղեկան լեւոնքը, Կո-
նիք ազգայնութիւն մը ի գործ դրած,
զէպի իր յարձանուտին կը քաշէ
զայն:

Եւ արդէն այս երկրին մէջ այս
գաղութիւն համաւ ապէ գատ տար-
բեր է, տարբեր ճամբայ, միայն
խուժ մը արկածախնդիր երազատե-
նեցող գանկին մէջ կը նար գոյութիւն
ունենալ: Կեանքը ուշ կամ կանուխ
պիտի քաշէր մեկ այս երկրին յա-
տուկ, անտեսական կրօնական եւ
քաղաքական պոռնիքին մէջ: Սա-
կան զփաղկոթիւնը այն է որ մեր
ՅԱՆՏՐԱՅԻՆԱԿԱՆ զեկազարները գոր-
ծունէութեան այնպիսի մեթոտ մը
որդեգրեցին որ կրնայ միայն ապրա-
ւոր վերջաւորութիւն մը ունենալ:

Անճրկած մեր ներքին կեանքին
մէջ իրենց փարթիկան անտի կեր-
բուրուն յաղեցում տալու, փոխադը-
րեցին զայն օտար հրապարակ. ինչ
ըսենք, կերբի մեր քաղաքէն է որ
շարունակ մեր զիսուն վրայ յիմար
երազատեաներ ունենանք իբր զեկա-
վար — առաջնորդներ:

Որքան ալ որ համոզուած ըլ-
լանք թէ տեղեկան մամուլին մէջ
մեզի զէմ զուտ աղտոտ պայքարը
հայու ստոր հաշիւներէ—բռնկած է եւ
զեւ հրապարակով ու ներքնապէս
ալ կը հրահրուի: Դարձեալ չենք կր-
նար աշքէ վրիպեցնել սա տխուր ի-
րողութիւնը թէ ան կրնայ առնու-
այն լաւագոյն անունը մը կազմել
ներկայ ժամանակներու միջ—ցե-
ղային տաղութեան հրեշտակի գա-
ցումին մասնաւոր որ այս երկրին
մէջ այդ ոգին, դարբնու տխուր
պատմութիւն մը ունի իր ետին:

Եւ յետոյ հակառակ կարգ մը
հայ թերթերու դիտումնաւոր աղմու-
կին, մեզի համար քաղաքի իրողու-
թեան մէջ է թէ Գիւրճի պարիսրու մէջ
այս պայքարը կենսաւորող աւելի
հիմնական, աւելի ծանրակշռող պատ-
ճառներ կան:

Ոյս գաղութը, տեղացի քաղկա-
ցուցիչ տարրերու աշքին որոշ ուժ
ներկայացնող իր գանգաւածով, կըր-
նայ այս կամ այն տարրին մէջ, մեզի
համար փառագաւոր այգալիսի հոգե-
կան տրամադրութիւն մը ոտեղծել:

Եւ արդէն, մի քանի տարիներէ
ի վեր պարբերաբար տեղական մա-
մուլին մէջ հրապարակ ելող հակա-
հայ այս ելոյթը, այնքան կիրքային
քան տաղութիւն ու մաղձ նետեց
Մեր երեսին, որ երբեք չէինք կրնար
զայն իբր պարզ լրագրական խաղ
կամ ինչպէս խուժ մը հայերու յա-
ճախանքը կազմող թշնամիներու գա-
ւարտութեանց արգելքը հետաւել:

Որեւ լրագրող անձի կամ համար
կանտրոլութեան համար, ամենաքիչը
անփութութիւնն է եւ կամ տնտես-
կան աղտոտ հաշիւներու արդիւնքը
եղածներու զէմ ծնունդալ նստիլ
եւ կամ զանոնք տեղական ներքին
պատճառներէ զուրս օտար ալիսալ
պատճառներու վերաբերել:

Ուշադիր որեւէ անձի համար
պայքարին ներկայ կերպին մէջ իսկ
շատ զիւրուքամբ կուրուագծելին
երկու հակընդդէմ հոսանքներ, որոնք
հետզհետէ ձեւ ու մարմին պիտի ըս-
տանան պիտի հիմունքին բնիկ ազգա-
քանակութեանց քաղաքական տնտե-
սական եւ կրօնական փափաքներուն
վրայ:

Հոս անգամ մը եւ կրկինք թէ
հարցը գաղութին ապագային տեսա-
կէտէն խիստ ծանրակշիւ բնոյթ մը
ունենալուն անդամներին սխալ մը-
պիտի ըլլայ ուշադրութիւնը չարձա-
նել զայն այն թեթեւօթիկ չըմանա-
կան, որոնք իրենք ու գէպերը
ցաւալի մտահոգութեամբ մը կուզեն
իրենց թաղուն փափաքներուն ու
տնտեսական աղտոտ հաշիւներուն
համաձայն դասաւորել:

(Շար.) ՄԵՆՈՒՍ

Ժերը գեւ զէնքի ՏԱԿ են սակայն
երեք չորս դասակարգի զէնքի առեկ
առնել քիսքաւ է:

ԽՈՐՀՐԵՐԱՆԻ ՆԵՄՏԸ Ն. Վ. ՎԱՐՁԱՊՅՏ ԱՍԻՊ ՓԱՅՄԱԻ ՃԱՌԸ

Ով կիւրք ըրպիւնիւր յօրնագիծ
մը պիտի գրուի խմբագրի խորհրդարա-
նի սեղանին վրայ: Յանձնարարութեմ
թէ մէկ թիւի եւ աղի վարչութեան
մասին օրինագիծեր կը պատրաստու-
նայ օրինագիծերը, ներկայ հասա-
ւորակայ պիտի ըլլան խորհրդարա-
նի կողմէ: Գանձարոււմի գործու-
նեցութիւնը պիտի տարուի յետոյ չի
չինուած սեփականութեան յատուկ
տուրքի, դատական, նոտարական,
մարդահամարի, գրօշմաթուղթի եւ
ուրիշ բոլոր տուրքերու վրայ:

Կառավարութիւնը բանակցու-
թեանց սկսած է Պէյրութի վարկա-
յին երկու գլխաւոր հաստատու-
թեանց հետ զանոնք հաւանեցնելու
համար որ, նոտարագոյն մէկ տար-
ուան պայմանագրով ու չափաւոր
սակով մը 1000 Լ. Ու. ոսկին շան-
ցնելու պայմանով փոխառութիւն-
ներ ընելու մշակելի հողեր ունեցող
փոքր կալուածատէրներու: Այս հի-
մունք վրայ, սկզբունքով համաձայն
նոտարական գոյացած է 7 1/2 առ 100
տոկոս որոշուած ըլլալով:

Այս կալուածատէրներու օգնու-
թեան հասնելու համար կառավարու-
թիւնը իր վրայ կ'առնէ տոկոսներու
մէկ մասը. 3 առ 100, պայմանաւ
որ փոխաւեր գումարը պիտի յատ-
կացուի մի միայն սերմնոցներու,
երկրագործական գործիքներու կամ
հողագործական եղանակներու գնումին:

Եթէ, ինչպէս կարելի է յուսալ,
առաջին երկու տարիներու մէջ փո-
խառուութեան այս գրութիւնը գո-
հացուցիչ արդիւնքներ տայ, այսօր-
ուանէ սկսեալ երկու կողմերու հա-
մար ալ յարմար է որ փոխարին հաս-
տատութիւնները ինչպիսիքն այս գոր-
ծողութեանց շրջանի, յոյժն սո-
նելով մշակելի հողերու բարեօրոշման
համար աւելի մեծ փոխառու-
թիւններ, գանձելի բազմաթիւ տա-
րածագրութեամբ մը 7 1/2 առ հարիւր
տոկոսով որոշ 3 առ 100ը կառա-
վարութեան յատուկ:

Փոխառուն պիտի օգտուի այն
վճարումին փոխառութեան առաջին
տարիներուն բովանդակ տեղու-
թեան միջոցին: Անկախ աստիճա-
նաբար պիտի գեղջուի յետոյ պիտի
չնշուի:

Վարկային հաստատութեանց
կողմէ յատկացուած բոլոր փոխա-
ռութիւնները պիտի երաշխաւոր-
ուին ինչպիսի իրենց գրաւական ար-
ձանագրութեամբ մը: Ու այս կա-
տարուիքը համաձայնութիւնը պի-
տի երաշխաւոր նախ Առեւոր. Սեն-
եակի վաւերացման:

Բնագործի ծառայողութեան
ծրարքի մը պիտի յանձնուի խորհր-
դարանի խիստ կարճ ժամանակամի-
ջոյն մէջ գործադրելի:

Կառավարութիւնը մասնաւոր
ուշադրութիւն ընծայած է զիւրազը-
նացութեան Դրացի երկրներու մէջ
արգար բերականութեամբ կատարու-
ած է. գոմէքաններու, լրագրական
հրատարակութիւններու, թուցիկ-
ներու եւ շարժապատկերային ցու-
ցադրութեանց միջոցաւ:

Սեմի միջոց ձեռք առնուած է
ճամբորդներու Լիբանանեան երկրա-
մասերու մէջ ճամբորդութիւնը դիւ-
րացնելու համար:

Պանդոկներու, իրենաներու եւ
զիւրազանքներու կողմէ յաճախու-
ած վայրերու առողջապահական պայ-
մանները անոնց պատշաճներն են եւ
հակառակ բովանդակ աշխարհի մէջ
սիրող տնտեսական տաղանդի, գո-
հունականութեամբ կը հաստատենք թէ
այս ամառ մեր լեռներու մաքուր
օդը շնչելու եկող օտարներու թիւը
բարձր է անցեալ տարուան համա-
պատասխան շրջանի թիւին:

Գաղով զատական ու պատարկու-
թեանց, անցեալ Մայիսի օրինագիծ
մը հրատարակուած է որոշելու հա-
մար այն պայմանները որոնցմով
կարելի է ձեռք բերել զատական

(Շար.)

ՄԱՍԻՊԻՏԵՆԻՆ ՍԵՆԱՊՈՐԻԻՄԸ

Ինչէն չու հրապարտան անշաղը-
ւոր չի ինտանի պիտի մէջադիւրէ,
անշաղտան թէ չի թէն սէպիլ թէ վէ-
րիւնք իւրէն ինչա օլունան մէն-
ֆար սուր իսթիմալաթ երկնէ, պէտ-
լէ միսթադիմ. նամուսու պիտի մէ-
սարիթ իսթիմալ իսթիլէր, զըտա-
ւար թէ միսթիլ իսթիլէր, սաղըր, պի-
շէյան իսթիլէր օլմայան Պետրիկ
երկնէ միսթիլաւար վէ թէպադի
ճէտիլէր վազըք հաղիկ պիտի սոգ-
թօր թային իսթիլ, վէ Ֆրանսաւան
ճէպ օլունան 20,000 զըտըլը ի-
նչէրէ, սաթիլ իսթիլ մէջադիւր փո-
լէն ատէմիլիմիդ 300տէն ֆաղաւր,
սիլլիսին պարտաւ սէթիլ վէ պն
գալան էլլատար, հալ սաստիլէր
տէգըլէր կէպ եւաղըր երկնէ մէջ
նուշիլթ թէպէսիլ մէջիլ գայիմ օ-
լուր իսթիլ. վէ հրապարտ կէտիլէր
կի կիպի սէնէ պէ սէնէ թէպադիմ
էտէն 2200 իսթիլ մէջադիւր տարիմ,
պանդաւար մէջադիւր իսթիլէր, պու
միսթիլէր միլլէթին մալը օլմադ վէ
մէտիլէր պիսթիլաւար թէպիլ ի-
սթիլէր իւրէն միսթիլէր պիտի Սա-
նաթիլ իսթիլէր միլլէթին թէպիլէր
թէպիլ իսթիլ իսթիլ:

Պու ինսթիլէր տալի, պիսթիլ-
սըք էրմէնի միլլէթին ճէնապը հազ
թարաֆընտան, սոն էնգաղընտան
եանի Տէրգոր չէտիլէրին ֆիւրարի-
լէրիսիլ իսթիլ իւրէն իսթիլ էտիլ-
միլ պիտի պէս օլմադ էտիլէր մու-
զաթիլ տէյլիլ, եւաղըր իսթիլ-
զէ կիլէն պիտի գըտըրն իսթիլ Բու-
հանիլ իւրէ մէջադիւր թէպիլէրին
ֆարք էլլմէք վէ աղըրտան տէգ-
իլլէր սաթիլ չէպադիլ իսթիլաւար
լու. թէպիլ տիլլէրին տոյմալ մի-
տէսինէ, կէտիլէր կիպի պիտի ճէ-

ԱՐԳԱՅԻՆ ԿԵԱՆՔ

ՏԻՐՈՒՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Ամսոյ 15ին, հետաքրքիրնե-
րու բազմութիւն մը հաւաքուած էր
Ներսիսեան տանին առջեւ սպա-
նելով Տիրուինի դատավարութեան
վերջնական լուծումը:

Նկատելով որ քէրքուքի եղեռ-
նագործ Ատեանի կողմէ ոճրագործ
իւրեւնք Ստեփանիֆէյքուք զանուիլ
ինչպէս նաեւ առ այդ տեղւոյն Գո-
միսէրի պաշտօնական ստուգումը
պարունակող վաւերագիրները չէին
հասած. դատավարութիւնը յետա-
ձգուած է յառաջիկայ Դեկտ. ամսոյ
15ին:

ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՆԻՍՏ

Լիբանանի Հայ Ազգային վար-
չական Ժողովը Հոկտ. 19, կիրակի կէս-
օրէ առաջ Ժամը 9 ին, Առաջնորդա-
րանի մէջ կը գումարէ իր նիստը
գրական, նիւթ ունեւայով կարեւոր
նպատակով: Հրահրուած են Մամուլի
ներկայացուցիչները:

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸ

Վարժարանները սկսած են կա-
նոնաւոր դասընթացքի: Գիւնելի է
որ, հակառակ Պատ. Ռուսիական
կորուստի եւ պատկան Ազգային
Մարմիններու ջանքերուն, կը գոր-
նուին կրթական մշակներ որոնք
լուծին ի ձեռնին պահանջուած ու-
սուցչական ձեռնհասութեան վկայա-
գիրներ իսկ ոմանք դատարարակա-
նա ձեռնհասութիւն: Աւելի արդիւ-
նաւոր էր ու անհրաժեշտ արժանա-
ւոր ու ձեռնհաս ձեռքերու յանձնել
նոր սերունդի դատարարակութիւ-
նը:

ՔԷՍԲԸ ԲԱՆԴՈՒԱԾ

Ատանա քէմփի Արեւելեան մա-
սի պարագները, որոնց քանգուստին
համար մինչեւ Հոկտեմբեր պայմանա-
մամ տրուած էր, գրեթէ իրենց տէ-
րու կողմէ քանգուստին էին առանց
ոստիկանական միջամտութեան: Մը-
նացած մի քանի տասնեակ պարագ-
ներն ալ քանգուստին են ոստիկանու-
թեան վերջին ազդարարութեան վը-
րայ:

ՔԷՍԲԸ ԲԱՆԴՈՒԱԾ

Համեմատաբար խիստ մօտ շըր-
ջաններու, խաղաղ է կենեքը քէմ-
փերու մէջ: Վարժարաններու վե-
րաբացման առթիւ կատարուած ու-
սուցչական ընտրութիւններու յարու-
ցած ազդեցիկներն ալ օրէ օր շնչելու
վրայ են: Իսկ Նահրի մէջ ոգեւորու-
թեամբ յառաջ կը տարուի նոր քէմ-
փերու շինութիւնը համեմատաբար
շատ առողջապահիկ պայմաններու
մէջ:

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ

ՄՏԱՆՈՒԹԻՒՆԸ

Ժողովուրդը մտահոգող կարեւո-
րագոյն խնդիրն է համայնավարե-
րու շուրջ տեղական թերթերու կող-
մէ յարուցուած պայքարը: Առաջնորդ
Սրբազանը իր պաշտօնական մէկ ալ
ցելութեան միջոցին Ընդհանուր Ա-
պագովութեան Տնօրէն Պրն. Պուշե-
տէ հաւաստիք ըստացած էր թէ
հայ համայնավարութիւնը կը հասնէր
60ի եւ հարկ չկար մտահոգուելու:
Փափաքելի է որ թէ Առաջնորդը եւ
թէ ազգային պատկան իշխանութիւ-
նը հարկ եղած լուսաբանութիւնները
տան առ այս:

ՆԱՀՐԻ ՎԱՐՉԱՎԱՐՈՒՆԸ

Կիմանանք որ Նահրի Թաղ.
կորուստը վարժարանի նախկին Տը-
նօրէն Պ. Մ. Նահարեան իր պաշ-
տօնին մէջ վերահաստատած է, իսկ
ն. Ֆէնէրեան հրաւիրած է որպէս
ուսուցիչ: Շատ կը ցաւինք որ իր
անցիակցութիւնն ու ներկայով գէշ համ-
բաւ շահող եւ Սերաստիոյ Հայրե-
նոցական Միութեան զբաղմը մըս-
տով ֆէնէրեանի մը կրթական հաս-
տատութեան ներս գործ կը վստահ-
ուի եւ մատուց սերունդը իրեն կը
յանձնուի:

Այս պարագան Նահրի բնակչու-
թեան եւ Թաղ. կորուստը լուրջ ու-
շաքտութեան կը յանձնենք:

ՏԵՂ. ԼՈՒՐԵՐ

ՆՊԱՍՏ ԳԱՐՔԱԿԱՆՆԵՐՈՒ

Նախարարաց կորուստը, իր վեր-
ջին նիստին մէջ 50000 ֆրանքի նը-
պաստ մը յատկացուցած է Սէն Տօ-
մինիկ կղզիի Լիւանանցի գաղթա-
կաններուն որոնք մեծապէս վնասու-
ած են յիշեալ կղզին աւերող մըրի-
կէ:

ՔԷՍԲԸ ԲԱՆԴՈՒԱԾ

Որոշ հրամաններ տրուած են
Գարանթինայի հայկական քէմփի
քանգուստին համար: Քէմփի բնակիչ-
ները պիտի փոխադրուին Էլբէֆիյէ
եւ Նահր:

Կեդրոնի Գոմիսէրին պաշտօն
տրուած է հսկելու համար քանգու-
ստին գործողութեանց 500 պարագնե-
րուն որոնց տէրերը զօրաշղթաբար չեն
յարգած առ այդ տրուած պայմանա-
մամը:

36 ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵՐԿՐԱՅԱՓՆԵՐ

Շամբուիոն նաւով Պէյրութ հա-
նած են 36 անգլ. երկրաչափներ ո-
րոնք իրազ պիտի մեկնին քարտէզ
չափագործումի գործին մէջ աշխա-
տելու համար:

ՇՈՖԵՐԻ ՍԸ ՇԱՀԱՍԿՈՒԹԻՒՆԸ

Թիւ 6743 ինքնաշարժի վարիչը
Կ'ուզէր անցնիլ Ժողէֆ Հանի փողո-
ցէն ուր գործաւորները զբաղած էին
ասֆալթի գործով: Գործաւորներէն
մին ուզեց արգելիլ անոր անցքը, վա-
րիչը զայրացած, խոյացաւ անոր վը-
րայ ու հրեց վայր տաք ասֆալթի
վրայ: Գործաւորը հիւանդանոց փո-
խադրուեցաւ իսկ իր ընկերները յան-
դուգն վարիչը բռնելով յանձնեցին
ոստիկանութեան:

ԲԱՆԴՈՒԱԾ ԵՒ ԱՍՈՐԻ

ԳԱՐՔԱԿԱՆՆԵՐ

Վերջերս Յունաստանէն եւ Սեւ
ծովէն բազմաթիւ Բաղդէացի եւ Ա-
սորի գաղթականներ սկսած են գալ
ասորի ընդհանուր պատերազմի մի-
ջոցին թրքական ճնշումներու պատ-
ճառաւ ստիպուած էին թողուլ իրենց
բնակավայրը Քիւրտիստան ու ապաս-
տանիլ Կովկաս եւ Յունաստան:

Բ. Գոմիսէրութեան եւ Բաղդէ-
ացի երեւելիներու ու Պատրիարքի
միջեւ կայացած համաձայնութեան
վրայ անոնք վերջնականապէս ընդուն-
ուած են հոգատարեալ երկիրներու
մէջ պայմանաւ սակայն որ միմիայն
հողագործութեամբ զբաղին:

Այս արարաբանս նորեկները ար-

տօնուած են հաստատուիլ Եփրատի
եզրերը ուր իրենց հողեր տրամադր-
ուած են:

Հաշտարար ընտանիքներ պիտի
հաստատուին վերին ձէզիբէի եւ
Տէր Զօրի շրջաններուն մէջ:

ԿԱՄԱՅԱԿԱՆ ՍՂՈՒԹԻՒՆ

Ներկայ եօթնեակի մէջ սմբու-
կին Բաթլը 24 դրուշի ծախուած է
մինչդեռ 2 դրուշ է Համայնի մէջ:
Այս տեսակ կամայական սղու-
թիւններ յաճախուող են Գոմիս-
տար:

ԺԱՆՏԱՐԱՆԵՐՈՒ ԳԼԻԱՆՈՅԸ

Նախարարաց կորուստը որոշու-
ածով, ժանտարմներ ձեռն եղանակին
մէջ փոխանակ գաղթաքի պիտի կը-
րեն ոստիկաններու զխանոցի ձեռով
եւ տարբեր գոյնով գլխանոցներ:

ՍՈՒՐԻԱԿԱՆ 40 ԳԻՒՂԵՐ ԾԱՌՈՒ

Սուրիական կառավարութիւնը
որոշած է հողագործութիւնը քաջա-
լերելու համար, Հալէպի հարաւային
կողմ գտնուող եւ տէրութեան պատ
կանող 40 գիւղերը ծախել:

ՖՈՋԻ ԷԼ ԿԱՋԻ ԴԱՏԸ

Դատական քաղաքային Նախա-
դատ Ատեանը Զօրեք արթի օր նիստ
գումարած է Զօրի էլ Կաղիի թունա-
ւորիչներէն Ռիտա էլ Կաղիի տարբ. քի
ճշգումին համար: Ուստատանայի
խնդրագիրը մերժելով, դատարանը
հաստատած է իր առաջին որոշումը
որով անիկա կը նկատուի 22 տարե-
կան:

ՀԱՆՐ, ՆԱԽԱԳԱՋԸ

ՄԵԾ ՍԷՐԱՅԻ ՄԷՋ

Ամսոյ 16 ին, Հանր. Նախագա-
նը Մեծ Սէրայ երթալով երկար տե-
սակցութիւն մը ունեցած է Պ. Թէթ-
րօյի հետ: Նախագահին կ'ընկերակո-
ցէին վարչապետ Օկիւսթ Ատիպէֆա-
շա եւ Լիբանանի կառավարութեան
Բ. Գոմիսէրի պատուիրակ Պրն. Բու-
րօն: Կը կարծուի թէ խորհրդակցու-
թիւն կատարուած է Հոգատարու-
թեան եւ կառավարութեան մի-
ջեւ գումարութիւն ունեցող կարեւոր
հարցերու շուրջ:

ԿԵՂԾ ՊԱՆՏՐՈՒՆԵՐ

Հարցաքննիչ դատաւոր Պր. Ֆի-
լիք Պուշու կը շարունակէ քննութիւն
ներ կատարել սիկալէթի կեղծ պան-
տրօրներու շուրջ: Շատ մը անձե-
րու, որոնցմէ Մոհամէտ Շաքէր էլ
Պէրճաւանի, Մուհեմտին էլ Պէրճա-
ուանի, ի պրահիմ էլեւա չալտար եւ
Ապի Հայա գործարանի սեփականա-
ւորներն ու տնօրէնները, ձերբակալ-
ման հրաման տրուած է:

= 4 =

Պահպանին անկեղծութենէն յայտնապէս տպա-
ւորուած, Պ. Լալէքն փոխն ի փոխ գիտելով իր մօտը
նստող երկու պաշտօնակիցները, որոնք քիչ վրդո-
վուած չէին պատմութենէն, զոր դեռ նոր լսած էին:

Յետոյ, ոտքի ելնելով ըսաւ.
— Լաւ, երթանք տեսնել. մեզ հետեւէ Կօթի:
Հասան «Բարբարոս Ատուածներու» սրահը, ուր
խումբ մը պաշտօնեաներ եւ ծառայողներ կը ճառէին
Պէլֆէկօրի արձանին առջեւ:

Երբ տեսան նոր եկողները, ամէնքն ալ քաշուե-
ցան, բացի գլխաւոր պահպան ժան Սապարաթէ,
ըմբռնական ձեւերով տեսակ մը հէրքիւլ, որ կը Ներ-
շնչէր միաժամանակ ոյժ, պաղարիւնութիւն եւ քա-
ջութիւն:

Յարգանք իր գլխաւոր հանելով, Սապարաթ
ուղղուեցաւ դէպի իր պետը եւ ըսաւ.

— Պ. տնօրէն, հոս կասկածելի հետքեր գտանք:
Եւ ցոյց տուաւ պատմանդանը Պէլֆէկօրի ար-
ձանին, — Մօպիթներու աստուծոյն — որուն ծառ-
ծու եւ հանելուկային գիմակը կը թուէ խոհալ,
հեղեկով մարդիկը չոր գինքը կը շրջապատէին:
Լալէքն մօտենալով ուշադիր քննեց պատուան-
գանը, որուն վրայ կ'երեւային թարմ քերթուածք-
ներ, բուսական խորունկ որոնք կը թուէին սուր մըկ-
րատէ մը յառաջ եկած ըլլալ:

Վրդովուած այս գիւտէն, տնօրէնը յարեց.

— Անիկա հասարակ բան մը չէ, պէտք է հաս-
կնալ թէ՞ գող մը մտած չէ՞ թանգարանին մէջ:

— Փիւքստայի զգացութենէն ի վեր, գիտե՞ս որ

ՄԻՀՐԱՆ ԱՂԱԶԱՐԵԱՆ

ԲԱՑԱԾ Է ԻՐ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ ՊԷՅՐՈՒԹԻ ՄԷՋ

ԳԻՄԵԼ. — Mihran Aghazarian B. P. 606 Beyrouth

[Gr. Liban]

ՄԻՀԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Բաւ Թաճարիի Թագադրութիւնը

Բաւ Թաճարիի Թագադրութեան հանդէսի Գերանակաւ
պատիւաւորեան նախագահելու համար Ասիս Ապապա մեկ-
նած է Ժեմ. Ֆրանցէ Տէպրէ:

Բայխաթակի աղմկալից նիստը

Բայխաթակի բացման նիստը անցաւ աղմկալից. 107 Հիթ-
լէթեան երեսփոխաններ մասնակցեցան նիստին:

Փողոցներու մէջ արմատականներ ու համայնավարներ ցոյ-
ցեւ կասարեցին. ոսիկանութիւնը միջամեց:

Ֆրանսօ-ամերիկեան մախ. համաձայնութիւն

Իրագել Երջանակներ կը կարծենք թէ մօտեւ պիտի ստ-
րագրուի, ժամանայի եւ Միացեալ Նահանգներու միջեւ կրկնապա-
սիկ մախատուի համաձայնագիր մը:

Գերմանիա կը վնարէ

Բայխաթակի նախագահ Պր. Լուրէր յայտարարած է թէ կառա-
վարութիւնը պատրաստ է յարգելու իր յետ պատերազմեան ինչպէս
նաեւ Եւրոպի փոխադրութիւնները:

Սպանիական հռովմութիւններ

Ընդհ. Ապահովութեան Տնօրէնը ազդարարած է հրամա-
նատար Ֆրանցօյի ձերբակալութիւնը անոր ըրած հանցանքական
յայտարարութեանց պատճառաւ: Ձերբակալուած են նաեւ Պարչէլո-
նայի բազմաթիւ սենիգալիսներ:

Օսմ. Հանրային Պարտեր

Օսմ. հանրային պարտոց Բաթմէսէրներու Ընկերակցու-
թեան կեդր. յանձնաժողովը Բարիկի մէջ գումարուած ու վնասած է
կարելի ընել թուի՝ կառավարութիւնը պարտագրելու համար որ
յարգէ իր 1928 Յունիս 28ին ստորագրած յանձնառութիւնը:

ՓՈՔՐԻԿ ԼԻԲԱՆՈՒԹԻՒՆ ՍԸ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆԸ

ՕՐ. ՂՕՐ ՏԷՔՔԷՇ

Պէյրութի ծանօթ վաճառական—գերանակներէն Պր. Ժօրժ
Տէֆֆէ, իր փոքրիկ աղջկան Լօր Տէֆֆէի հետ կը մեկնի Եգիպտոս,
Պալաս—Ֆոն Ջայնագրի Ընկերութեան հետ կայացած համաձայնու-
թեան մը վրայ, ըստ որում Օր. Լօր Տէֆֆէի հետեւալու ձայնով պի-
տի պատրաստուի մը ըլլալը:

Լիբանան, խիստ մօտ օրէն, բաղդը պիտի ունենայ վայրե-
լու իր տաղանդաւոր մէկ պոսիկ գետակին ձայնը ցուցադրող բը-
լագները:

ՊԵԼՔԷԿՕՐ

Ա. Ռ. Ա. Ջ. Ի. Ն. Մ. Ա. Ս.

ԼՈՒԿՐԻ ԳԱՐՏՆԻՔԸ

I

ԲԱՐԲԱՐՈՍ ԱՍՏՈՒԱԾՆԵՐՈՒ ՍՐԱՇԸ

— Լուսինի մէջ ուրուական մը կայ:

Սոյն տարօրինակ գրոյցը կը շրջէր մեր ազգային

թանգարանին մէջ, 1925 Մայիս 17 ին:

Ներանցքներու մէջ, սանգուստներու վրայ, ամե-
նուրեք, մարդիկ իրարու կը մօտենային, ոմանք սար-
սափահար, ոմանք անհաւատ, եւ կը փութային մեկ-
նարանի տարօրինակ լուրը:

«Տափիտ» կոչուած սրահին մէջ, նախօրէին օժման
հոշակաւոր պատկերին առջեւ, երկու պահպաններ
սարք վիճարարութեան մը բռնուած էին:

Շատ չանցած, անոնց մօտեցան աւելածները
եւ, կարենալ մտիկ ընելու իրենց խօսակցութիւնը,
որ բաւական չահեկան էր:

— Ես քեզի կ'ըսեմ որ ասիկա օւրուական մ'է.

կը ձգտուի պահպաններէն մէկ:

